

Ключевые слова: Закавказье, Азербайджан, террористическая политика, Арцахское движение, Хачисар, военная операция "Кольцо", этническая чистка, атака, безопасность, признание независимости.

*Harutyunyan M. A., Candidate of Historical Sciences, Docent,
the Head of "Kachar" Scientific Center,
Chair of "The Humanities and Languages"
of Shushi Technological University*

ABOUT THE TERRORISTIC CHARACTER OF THE ANTI-ARMENIAN POLICY FROM 1987 TO 1991 OF THE AZERBAIJANI SSR AUTHORITIES

The Democratic Republic of Azerbaijan which was formed as a result of the intervention of Turkish invaders in Caucasus and the Genocide of Eastern Armenian population had built its relation with non-Muslim nations on the basis of terroristic policy.

The Sovietization of Azerbaijan, on the contrary of the vain visions of Armenian Bolsheviks, didn't change its terroristic character. Using Qemal-Lenin criminal cooperation the Muscovite Azeris, who had modified according to the situation, reached new territorial achievements to the detriment of Armenia, especially Artsakh through cunning deceives and intimidations.

The Armenian population of Artsakh, who had obtained autonomy during almost seven decades of Soviet dictatorship, had always been subjected national, political, social-economic, spiritual-cultural and other repressions and discriminations and had faced various expressions of terroristic policy of Azerbaijani SSR every time while trying to protect their elementary rights.

The anti Armenian policy of the previous decades from 1987 to 1991, which is reflected in this article with true facts, had carried obvious terroristic character which was aimed at the bloody abolition of the political phase of Artsakh movement of that time.

Key words: *Caucasus, Azerbaijan, terroristic policy, Artsakh movement, Khachisar, "Ring" military activity, ethnic purification, attack, security, recognition of independence.*

Այսրկովկասում թուրք զավթիչների ինտերվենցիայի և Արևելյան Հայաստանի հայ ազգաբնակչության ցեղասպանության հետևանքով ստեղծված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը ոչ մահմեդական ժողովուրդների հետ հարաբերությունները կառուցել է ահաբեկչական քաղաքականության հիման վրա: Ստեղծված լինելով Թուրքիայի կողմից և իրականացնելով արմենոցիդի թուրքական քաղաքականությունը նաև Այսրկովկասում Ադրբեջանը նախկին Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգներում իրականացրեց տասնյակ հազարավոր հայերի կոտորածներն ու բռնի տեղահանությունները և տեր դարձավ պատմական Հայաստանի ընդարձակ տարածքներին:

Ադրբեջանի խորհրդայնացումը, հակառակ հայ բոլշևիկների սին պատրանքների, չփոխեց նրա ահաբեկչական բնույթը: Քեմալ-Լենին հանցավոր գործակցությունից օգտվելով՝ ըստ իրադրության կերպարանափոխված մուսավաթականները խորամանկ դավերի ու ահաբեկումների միջոցով նոր տարածքային նվաճումների հասան ի վնաս Հայաստանի, մասնավորապես Արցախի:

Խորհրդային բռնատիրության գրեթե յոթ տասնամյակների ընթացքում ինքնավարություն ձեռք բերած Արցախի հայ ազգաբնակչությունը մշտապես ենթարկվել է ազգային, քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային և այլ բռնաճնշումների ու խտրականության, իսկ ամեն անգամ, երբ փորձել է պաշտպանել իր տարրական իրավունքները, դեմ է առել ԱդրիՍՍՀ ահաբեկչական քաղաքականության ամենատարբեր դրսևորումներին:

1987-1991թթ. նախորդ տասնամյակների հակահայկական քաղաքակա-ությունը ձեռք բերեց ակնհայտ ահաբեկչական բնույթ, որն այս անգամ նպատակաուղղված էր Արցախյան շարժման քաղաքական փուլն արյան մեջ խեղդելուն:

Ադրբեջանցիները, ինչպես նախորդ տասնամյակներին, ահաբեկչական գործողությունների են դիմել՝ նպատակ ունենալով ուժի կիրառման կամ դրա սպառնալիքի միջոցով կասեցնելու Արցախյան շարժումը:

Այդ իսկ նպատակով, 1987թ. հոկտեմբերին ադրբեջանական իշխանությունները հակամարտություն են սադրել հայկական Խաչիսար (Չարդախլու*) գյուղում, որտեղ հայ բնակչության նկատմամբ բռնություններ են գործադրել ԱդրիսՍՀ ՆԳՆ ստորաբաժանումները: Պատմաբան Կիմ Ղահրամանյանի վկայությամբ՝ հայերին բռնի տեղահանելու ձգտումները 1987 թ. ադրբեջանական իշխանություններն այլևս չեն թաքցրել: Առաջինը թիրախ է դարձել ԱդրիսՍՀ Շամխորի շրջանի (Մեծ Հայքի Ուտիք նահանգի նախկին Շակաշեն գավառի) Խաչիսար գյուղը, որը շրջակա հայկական բնակավայրերի համախմբման, ինքնակազմակերպման կենտրոնն էր: Ամիսներ շարունակ գործադրվող բռնություններից հետո միլիցիայի գլխավորությամբ գրեթե 200 զինված ադրբեջանցիներ հարձակվել են հայկական գյուղի վրա¹:

Ուսումնասիրող Ս. Գրիգորյանը հայկական նշանավոր Խաչիսար գյուղում ԱդրիսՍՀ իշխանությունների սադրած դեպքերը՝ բռնություններն ու ապօրինությունները համարել է այդ միութենական հանրապետությունում հայ ազգաբնակչության ցեղասպանության և էթնիկական գտումների հերթական փուլի սկիզբը²:

Պատմականորեն անընդհատ բնակության վայրերից հայ խաղաղ բնակիչների բռնատեղահանության վաղեմի քաղաքականության վերագործարկման մեկնարկը հատկապես այդ եզակի գյուղից, որը, ինչպես հայտնի է, նախկին ԽՍՀՄ երկու մարշալների, 12 գեներալների* և Խորհրդային Միության 7 հերոսների հայրենիքն է, Ս. Գրիգորյանը գնահատել է որպես ԱդրիսՍՀ իշխանությունների հետապնդած մի քանի ստոր նպատակների արտահայտություն: Դրանց իրականացումը, շնորհիվ Խաչիսարի հայ բնակչության մարտական ոգու և հայրենի հողին անսահման նվիրվածության, տևել է մի ամբողջ տարի:

Ս. Գրիգորյանը գտնում է, որ 1987 թ. դեկտեմբերին, երբ ԱդրիսՍՀ իշխանությունները սադրեցին Խաչիսարի ողբերգական դեպքերը, ԽՍՀՄ-ը դեռևս պահպանում էր իր ամբողջատիրական համակարգը և խորհրդային երկրում ազգամիջյան հիմնախնդիրների մասին գրելը ոչ միայն ընդունված չէր, այլև շատ վտանգավոր էր, ուստի մարշալների գյուղի հայ բնակչության տարրական իրավունքների նկատմամբ ոտնձգությունների մասին քիչ փաստաթղթեր են պահպանվել: Դրա լավագույն ասպցույցը այդ թեմայով միակ «Անցյալի գերության մեջ» հրապարակման հեղինակ Ալեքսանդր Բեկկերի ճակատագիրն է. «Իզվեստիայի» գլխավոր խմբագիրը մերժել է այդ հոդվածի հրապարակումը և լրագրողին ազատել է աշխատանքից: Բեկկերի ջանքերով նյութը հրապարակվել է քիչ հայտնի «Сельская жизнь» («Սելսկայա ժիզն», այսինքն՝ գյուղական կյանք) թերթի 1987 թ. դեկտեմբերի 24-ի համարում³: Այս հոդվածը և հենց իսկ տուժածների խաչիսարցիների Մոսկվա ուղարկած նամակները, ըստ Ս. Գրիգորյանի, Խաչիսարի հայաթափման մեկնարկի և բռնարարքների փաստերի մասին վկայող գործնականում միակ փաստաթղթերն են: Ինչպես վկայել է Ա. Բեկկերը, ամեն ինչ սկսվել է դեռևս 1987 թ. հուլիսին, երբ կոմկուսի Շամխորի շրջկոմի առաջին քարտուղար Ասադովը, օգտվելով ԱդրիսՍՀ կուսակցական ղեկավարության անվերապահ աջակցությունից, ձեռնամուխ եղավ բնիկ հայ բնակչությանը դուրս մղելու քաղաքականության իրականացմանը:

Կարծում ենք, որ բավական բնութագրական են Ս. Գրիգորյանի գնահատականները երեք տասնամյակ առաջ տեղի ունեցած ողբերգական դեպքերին: «Ադրբեջանցի ջարդարարներին

* Ըստ ավանդության, «Հովիտը փոքր առ փոքր բարձրանալով, ընդհարվել է չորս լեռների, որի պատճառով էլ գյուղը կոչվել է Չարդախլու, այսինքն՝ «Չհար Ղաղլու» (չորս լեռնանի): Բնակիչները հիմնականում Թիֆլիսի Հավլաբարից 1823 թ. գաղթած, ծագումով երևանցիներ էին, մասամբ նաև՝ Ղարադաղից և Պարսկաստանից գաղթականներ (*Լալայան Ե.*, Երկեր, հ. 2, Ե., 1988, էջ 311, տես նաև՝ *Վարդանյան Ս.*, Գանձակի բանահյուսությունը Երվանդ Լալայանի գրառումներում, «ՊԲՀ», էջ 105):

¹ *Ղահրամանյան Կ.*, Հյուսիսային Արցախ (պատմության քննական վերլուծություն), պատմ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, էջ 34:

² Тругорян М., Рубикон/ 2017-12-04/http://www.golosarmenii.am/article/60860/rubikon

³ http://blognews.am/arm/news/398988/legendar-chardakhlu-gyuxy-orn-ashkharhin-tvel-e-khorhrdayin-miutyayn-2-marshal-12-general-7-khshh-heros-photo.html

⁴ *Беккер А.*, Конфликтная ситуация. У прошлого в плену.- «Сельская жизнь», N 294, 24 декабря 1987г.

յուրահատուկ «ծիսակարգային» ցինիզմը կայանում էր նրանում, որ ջարդերը սկսվել են այն օրերին, երբ երկիրը նշում էր Հովհաննես Բաղրամյանի 90-ամյակը: Չարդախլուում տեղադրված նրա կիսանդրին պղծել են ԱդրիՍՀ պետապարատի ավագակները»: Ըստ նույն հեղինակի՝ «Չարդախլուում Բաքվի ցեղասպանական քաղաքականության առաջին թիրախը դարձավ նաև այն պատճառով, որ չունենալով Հովհաննես Բաղրամյանի և Համազասպ Բաբաջանյանի մակարդակին անգամ մոտիկ իրենց զորավարները, երկար տարիներ ստիպված հանդուրժելով ամբողջ միության մասշտաբով հենց այդ հայկական գյուղի փառքն ու հռչակը՝ ԱդրիՍՀ իշխանությունները անզոր չարությամբ ու նախանձով որոշեցին հենց այդ եղանակով «վրեժ լուծել» չարդախլուեցիներից»:

«Նախընթաց 30 տարիների և անցած ճանապարհի բարձրությունից հարկ է հավաստել, որ Չարդախլուի ջարդերը դարձել են հայ ժողովրդի հանդեպ թուրքիայի ցեղասպանական քաղաքականության հերթական փուլի մեկնարկի մասին ազդարարող տագնապի զանգը»։ Մ. Գրիգորյանի այս դիպուկ բնորոշումը համահունչ է Արցախյան շարժումը թուրք-հայկական դարավոր հակամարտության համատեքստում դիտարկելու մեր կողմից զարգացվող առանցքազադափարին: Վիթխարի երկրում հանրահռչակված գյուղը դարձավ ԱդրիՍՀ իշխանությունների առաջին թիրախը: Դրանով «ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության» մասին մեղրածոր ճառերով քողարկված հակահայկական թաքուն քաղաքականությունից և գաղտնագողի հարվածներից ԱդրիՍՀ-ն անցել է բացահայտ բռնություններին, բռնատեղահանություններին, էթնիկական զտումներին և ցեղասպանությանը:

Այս կարևոր շեշտադրումներից հետո Մ. Գրիգորյանն անդրադարձել է նաև Խաչիսարում հայ բնակչության հանդեպ թուրքական դաժան մեթոդներով հաշվեհարդար տեսնելու սահմանափակ հնարավորություններին: Այնտեղ «սոււմգայիթ» տեղի չունեցավ ոչ միայն տեղի բնակչության տոկոսության և համախմբվածության շնորհիվ, այլև այն պատճառով, որ ԱդրիՍՀ ղեկավարությունը դեռևս ստուգում էր Մոսկվայի հակազդեցությունը՝ չհամարձակվելով միանգամից անցում կատարել կոտորածի: Խորհրդային ղեկավարության անգործությունն ու անտարբերությունը դարձան ազդանշան և փաստորեն գործողության ազատություն տվեցին ԱդրիՍՀ-ին արյունահեղության համար: Խորհրդային Ադրբեջանի բարձրագույն իշխանության ներկայացուցիչների անթաքույց մասնակցությունը և միանգամայն խաղաղ ժամանակ խորհրդային քաղաքացիների դեմ բռնություններին իրավապահ մարմինների ներգրավումը կոչված էին բոլորին ցուցադրել», որ այդ ամենի հետևում կանգնած է պետությունը: Դրան էր նպատակաուղղված խորհրդային զանգվածային տեղեկատվության միջոցների օր օրի թափ առնող հակահայկական քարոզարշավը:

Տպավորություն է ստեղծվում, որ ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է Ա. Բեկկերի կողմից արհեստավարժորեն ներկայացված այն առաջընթացը, որը նկատվել է Երևանից համապլուզացիների հրավիրած և 1986-ին մարշալ Հ. Բաղրամյանի անվան խորհտնտեսության նախագահ ընտրված Ս. Եղիյանի եռանդուն ջանքերի շնորհիվ: Քայքայված տնտեսության վերակենդանացումը և գյուղի հայ բնակչության կենսապայմանների նկատելի բարելավումը ԱդրիՍՀ իշխանությունների հակահայկական քաղաքականության շրջանակներում չէր տեղավորում, ուստի Շամխորի շրջկոմի առաջին քարտուղարի միջոցով ամեն ինչ արեցին գյուղի սոցիալ-տնտեսական վերելքը կասեցնելու և հայաթափելու համար:

Միանյա մաքառումներից հետո, 1988 թ. նոյեմբերի վերջին և դեկտեմբերին Խաչիսարն ամբողջովին հայաթափվեց, ընդհատվեց հայկական բնակավայրի շուրջ հինգհարյուրամյա* գոյատևումը:

Ըստ այդ ժամանակ ԱդրԿԿ աշխատակից Վալերի Աթաջանյանի՝ Մոսկվայից հատուկ հանձնաժողով է աշխատել տեղում պարզելու համար Ասադովի կողմից պաշտոնական դիրքի չարաչափման ու կամայականությունների հանգամանքները: Ի վերջո Ասադովն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Պետք է վրիպակ համարել Մ. Գրիգորյանի այն դիտարկումը, որ «ավագակային հարձակումներն ու անթաքույց բռնությունների ակտերը ղեկավարում էր Մ. Ասադովը՝ նույն ինքը, որը 1988 թ. հայտարարել էր, որ «հարյուր հազար ադրբեջանցիներ պատրաստ են ներխուժել Դարաբաղ և այնտեղ կոտորած սարքել», իսկ 1991-ին դարձել է «Կոլցո» չարաղետ ռազմագործողության նախաձեռնողներից ու կազմակերպիչներից մեկը»: 1987 թ.

* Գյուղի մասին պատմական վկայությունները տանում են մինչև 7-րդ դար (տես *Աղաթյան Լ.*, Չարդախլու: Հայկական գյուղի պատմություն, Ե., Զանգակ-97, 2004, էջ):

¹ Гргорян М., Рубикон/ 2017-12-04/http://www.golosarmenii.am/article/60860/rubikon

Խաչիսարի հայ ազգաբնակչության հանդեպ բռնարարքների կազմակերպիչը՝ Շամխորի շրջկոմի 1-ին քարտուղար Ասադովի անունը Աջար էր, իսկ 1988 թ. փետրվարին «Ստեփանակերտում 100 հազար ադրբեջանցիների ցույց կազմակերպելու» սպառնալիք հնչեցրած ԱդրԿԿ կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Ասադովի անունը Մամեդ(Մահմեդ), որն, անշուշտ, չէր համարձակվի կոտորած սարքելու մասին հայտարարել, պարզապես «ցույց անելու» նրա խորամանկ ձևակերպման ենթատեքստը հասկանալի էր:

Ադրբեջանական կողմի սադրանքը, հակառակ այն լռության մատնելու խորհրդային իշխանությունների ջանքերի, անհատական նախաձեռնության շնորհիվ ստացել է հանրային հնչողություն: Այդ մասին վկայել է Մ. Սարգսյանը. «Այդ օրերին ես մեկնեցի Չարդախլու, որպեսզի ծանոթանամ իրավիճակի հետ: Մարդիկ... վախենում էին, որ իրենց կկոտորեն: Տեսնելով այդ ամենը, զանգեցի Իգորին եւ ասացի, որ մի բան պետք է արվի: Կարծում եմ, որ հենց այդ պահից՝ 1987թ. հոկտեմբերից, Ղարաբաղում սկսվեց զանգվածային շարժումը: Ես ու Իգորը պետիցիա ներկայացրեցինք Հայաստանի ԿԳԵ-ին, նամակներ ուղարկեցինք Ղեմիրձյանին, որտեղ ներկայացրեցինք իրավիճակը՝ նշելով, որ այդ մարդկանց օգնություն է անհրաժեշտ: Նրանցից պատասխան չստացանք, սակայն գործընթացները շարունակվում էին: Այդ դեպքերի դեմ բողոքելու նպատակով պատրաստվում էինք անցկացնել հանրահավաք, տարածեցինք թռուցիկներ: Իգորն իր հետ բերել էր Գորբաչովի մեծ դիմանկարը: Նախատեսել էինք անցկացնել հանրահավաքը Կենտկոմի (այսօրվա Ազգային ժողովի) շենքի մոտ: Նախատեսում էինք, որ կհավաքվեն մոտ 200 մարդ, սակայն, ի գարմանս մեզ, եկան մոտ 1000 հոգի: Երբ ոստիկանները փորձեցին «վրա տալ», Իգոր Մուրադյանը հանեց Գորբաչովի նկարը ու սկսեց բարձրաձայնել «Перестройка, Горбачев, Карабах», ինչը սթափեցրեց նրանց եւ մենք անցկացրեցինք այդ հանրահավաքը եւ անգամ երթ արեցինք: Բայց, ի վերջո, ոստիկանությունը ճնշեց մեզ, հրմշտոց սկսվեց, Գորբաչովի նկարը գետնին հայտնվեց: «Ազատություն» ռադիոկայանը հաղորդել էր այդ ցույցի մասին եւ բավականին մեծ աղմուկ բարձրացավ»¹:

Արցախյան շարժման 1988-ի զարթոնքի սկզբնավորման շրջանում ադրբեջանական քարոզչությունը մեծ տեղ էր հատկացնում նաև ցարական սևհարյուակային ահաբեկչական գաղափարախոսների ակնհայտ հակահայկական հրապարակումների վերահրատարակմանը և տարածմանը: Դրանով ԱդրԽՍՀ իշխանությունները յուրովի գաղափարաբանորեն նախապատրաստում էին հայ ազգաբնակչության նկատմամբ պետական ահաբեկչության վերագործարկումը:

Արդեն 1990-ի սկզբին, այսպես կոչված Ադրբեջանի ժողովրդական ձակատի ներկայացուցիչները, նենգափոխելով իրականությունը, ձգտել են Սումգայիթի հայ բնակչության ցեղասպանությունը ներկայացնել իբրև ինչ-որ պատասխան միջոց ՀԽՍՀ-ում ադրբեջանցիներին ճնշելու դեմ: Այդ ապատեղեկատվության առանցքում Ղափանի շրջանից ադրբեջանցիների արտաքսման կեղծիքն է, որը ադրբեջանցի կեղծարարները ձգտել են ներկայացնել որպես հակամարտության մեկնակետ: Իսկ թե ինչպես էին զարգանում իրադարձությունները 1988 թվականի սկզբին, վկայել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի տեսուչ, այն ժամանակ կուսակցության Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռոլանդ Սուրենի Ղոնյանը²:

Նախ ամենատարբեր պաշտոնյաներ հայտարարություններ, սպառնալիքներ էին հնչեցնում, ապա նաև ձեռնարկվեցին ահաբեկչական գործողություններ, ինչպես օրինակ, փետրվարի 22-ին Աղդամից բազմահազարանոց ամբոխի հարձակումը Ասկերան ավանի վրա, որին հաջորդեց առավել մեծ ծավալի ու աննախադեպ ոճրագործությունը Սումգայիթում, որտեղ երեք օրերի ընթացքում հայ բնակչությունը ենթարկվում էր կազմակերպված կոտորածների, սպանդի և միջնադարյան բոլոր վայրագություններով լեցուն բռնարարքների: Այս ահաբեկ-չական գործողությունների նպատակը մեկն էր՝ ստիպել հայ ժողովրդին, հատկապես արցախահայությանը հետ կանգնելու իր արդարացի պայքարից, դադարեցնելու մայր հայրենիքի հետ միավորվելու համար պայքարը, որը, ինչպես հատնի է, միակ միջոցն էր դիտվում արցախահայության կողմից իր ազգային ինքնությունը պահպանելու և իր պատմական հայրենիքում ապրելու իրավունքի համար:

Ադրբեջանական բոլոր կառավարություններն հետեւողականորեն իրականացրել են էթնիկական զտման քաղաքականություն, որի արդյունքում հայ ազգաբնակչությունը բռնի տեղահանվել է իր հայրենի եզերքներից, որոնք զարտուղի միջոցներով ու անպատիժ կերպով,

¹ <http://www.mediamax.am/am/specialprojects/sharjum25/>

² Տես Ինչ է եղել Ղափանում և ինչպես են ձգտում այն մատուցել, «Կոմունիստ», 9 հունվարի, արտատպվել է «Ղափան» (Օրգան ՀԿԿ Ղափանի շրջկոմի, ժողովրդական դեպուտատների շրջանային և քաղաքային խորհուրդների), N 7, 16 հունվարի 1990 թ., էջ 2:

տարբեր ժամանակներում զավթվել էին Ադրբեջանի կողմից: Դեռևս 1920-ական թվականներին սանձարձակ բնույթ ստացած այդ քաղաքականությունը վերստին բացահայտ դրսևորվեց արդեն 1980-ականների վերջերին: Քուռ գետից ձախ եւ աջ, ընդհուպ մինչեւ նախկին ԼՂԻՄ սահմաններն ընկած տարածքներից հայերի բռնի տեղահանությունները, ջարդերը, անշարժ ու շարժական գույքի բռնագրավումները մի տեսակ ստվերի տակ են թողել Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի իրագործած էթնիկական գտումները: Դրանց, որպես կանոն, նախորդում էին հակահայկական քարոզչությունը, ահաբեկչական ձեռնարկումները եւ կեղծ տեղեկատվության տարածումը: Տակավին 1988-ի փետրվարի 14-ին կոմկուսի Ստեփանակերտի քաղկոմում Ադրբեջանի ԿԿ կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Մ. Ասադովը սպառնացել է, որ հարեւան շրջաններից մարզ կարող են մտնել 100 հազար զինված ադրբեջանցիներ¹: Այսինքն՝ Ադրբեջանի կուսակցական ու խորհրդային ղեկավար մարմինները հենց սկզբից ընտրել են ահաբեկչության ու շանտաժի ճանապարհը՝ ստիպելու արցախահայությանը հրաժարվել ազատագրական պայքարից: Խորհրդային ուժային կառույցների հազարավոր ծառայողներ ԼՂԻՄ տեղափոխելը, Ադրբեջանից բազմահազարանոց ամբոխի հարձակումը սահմանային Ասկերան ավանի վրա(22.02.1988թ.), եւ այլ կազմակերպված գործողություններ, արցախահայությանն ահաբեկելու նպատակ են հետապնդել: Այս հարթությունում պետք է դիտարկել նաեւ 1988թ. մայիսի 16-18-ի եւ սեպտեմբերի 18-21-ի ընթացքում Շուշի քաղաքի հայ բնակչության բռնի տեղահանությունը, ինչը, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, հանդիսացել է առաջին էթնիկական գտումը Լեռնային Ղարաբաղում: Այդ իրադարձությունները, կարծում ենք՝ պետք է գնահատել Շուշի քաղաքի նկատմամբ ադրբեջանցիների հավակնությունների եւ Արցախի համար այդ բերդաքաղաքի ունեցած նշանակության համատեքստում:

1990-ականների սկզբին ԱդրԽՍՀ իշխանությունները նկատելիորեն ուժեղացրել են բռնաճնշումներն ու ահաբեկչական գործողությունները հայ ազգաբնակչության նկատմամբ: Մեծ էր ճնշումը հատկապես Խանլարի և Շահումյանի շրջանների հայկական բնակավայրերի վրա: Դրա վկայություններից էր 1990 թ. հունվարի սկզբներին Մեղրյանի և շրջանի մյուս ղեկավարների պատանդառումը Մարտունաշեն գյուղի մոտ, երբ նրանք շտապում էին մասնակցելու ադրբեջանցիների կողմից սպանված մարտունաշենցի պահակի հուղարկավորությանը:

Այսպիսով, մի շարք ահաբեկչական գործողություններով ու բռնարարքներով ճնշում գործադրելով հայերի վրա եւ շանտաժի ենթարկելով Կենտրոնին՝ Ադրբեջանը շտապեց ամրագրել իր թվացյալ հաղթանակը: Հաղորդվեց, որ ԱդրԿԿ ԿԿ պլենումում Ե. Կ. Լիզաչովը հայտարարել է, թե Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հարցը ոչ քննարկվել է ոչ էլ քննարկվելու է՝ դրանով վերստին սադրելով ստեփանակերտցիներին դիմելու գործադուլի:

«ԿՈՒՑՈ» (թարգմ.՝ «Օղակ») ռազմագործողությունը հայ ազգաբնակչության դեմ հոգեվարք ապրող կոմունիստական վարչակարգի կողմից իրականացված ահաբեկչական քաղաքականության դրսևորում էր, որն իր բարձրակետին է հասել 1991 թ. ապրիլ-օգոստոս ամիսներին: Դրա կազմակերպիչների նպատակն է եղել Հայաստանին պարտադրել միանալու միութենական նոր պայմանագրին եւ հրաժարվելու հանուն անկախության մղվող պայքարից: «Օղակ» ռազմագործողությունը, փաստորեն, իրականացվել է մի քանի փուլով.

Առաջին. 1991թ. ապրիլի 30-մայիսի 8 –Արցախի Գետաշեն եւ Մարտունաշեն գյուղերի ավերումը եւ շուրջ 3,5 հազար հայ բնակչության բռնի տեղահանությունը:

Երկրորդ. 1991 թ. մայիսի 13-18 – Հաղուրթի շրջանի ծայրամասային գյուղերի եւ Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի հայկական բնակավայրերի բռնատեղահանությունը եւ ավերումը: Զուգահեռաբար հարձակման են ենթարկվել նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջանները(Ոսկեպար եւ այլն):

Երրորդ. 1991 թ. հուլիսի 6-օգոստոսի 19 – Շահումյանի շրջանի մի շարք բնակավայրերի(Երբեջ/Այրքաջ/, Բուզլուխ/Սառցուտ/, Մանաշիդ/Մնաշեն/) հայաթափումը եւ Մարտակերտի շրջանի Հաթերք ու Վերին Հոռաթաղ գյուղերում ծավալված իրադարձությունները: Այդ բնակավայրերը բռնատեղահանությունից փրկվեցին Մոսկվայում կատարված պետական հեղաշրջման ձախողման ու հետադիմական ուժերի պարտության շնորհիվ:

¹ տես **Арутюнян В. Б.**, События в Нагорном Карабахе. Хроника: часть 1. Е., 1990, с. 36

Վերոնշյալ փաստերն ի ցույց են դնում Ադրբեջանի իշխանությունների էթնիկական գտումների ու ահաբեկչական գործողությունների այն քաղաքական գիծը, որի ականատեսն ենք ինչպես նախորդ, այնպես էլ ընթացիկ դարերում:

Ակներև է, որ հայ քաղաքական օրակարգի հարց է Ադրբեջանի պետական ահաբեկչության եւ էթնիկական գտումների քաղաքականության դատապարտումը: Ինչպես հետագա իրադարձությունները, այնպես էլ Ադրբեջանի կողմից պատերազմը վերսկսելու առ այսօր շարունակվող սպառնալիքները անպատժելիության եւ համարժեք քաղաքական գնահատական տալուց միջազգային հանրության խուսափելու արդյունք են: Ազրեսիա, հայերի բռնատեղահանություն, կոտորածներ ու էթնիկական գտումներ իրագործած Ադրբեջանը շարունակում է հավատարիմ մնալ պետական տեռորի հետեւողական քաղաքականությանը, դրանով ոչ մի հնարավորություն չթողնելով հարաբերությունների կարգավորման համար:

Միակ ելքը, թերեւս, միջազգային հանրության եւ տարածաշրջանի կա-յունությամբ ու անվտանգությամբ իրապես շահագրգռված պետությունների կողմից Ադրբեջանի տեւական ահաբեկչական քաղաքականությանը քաղաքական գնահատական տալը եւ անհապաղ ԼՂՀ անկախությունը ճանաչելն է, ինչն արցախահա-յության անվտանգության եւ տարածաշրջանի կայունության երաշխիքը կլինէր: